



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ



Ա Մ Ս Ա Գ Ե Բ



ՌՅՀԹ-ՌՅՑ

1930

ՀԱՏՈՐ

ՆՈՅՆՄԲԵՐ

ՁԸ

ԹԻՒ 11



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆչ օգտուել է Հայաստան Ասորիքէն


Ձ. Ասորեստանի և Մարա-Պարսկաստանի հետ հաւասար սահմանակից է Հայաստանի Ասորիքը, բաժնուած վերին, միջին և ստորին Ասորիքի՝ որ ոմանց թրււնքաւ թէ աւելի ազդեցութիւն մը ունեցած է Հայաստանի շինուածական և ճարտարապետական զործերուն վրայ, մանաւանդ յարգելի ճարտարապետ Խորամանկան յառաջ գնալով գտաւ որ Հայաստան ամէն ինչ կը պարտի Ասորիքի, եթէ

կէին իրենց ուսումնասիրութեան էջերն. և սակայն այնպէս չէ. որովհետեւ հարցը ընդհանուր ճարտարապետութեան մասին չէ, այլ մասնաւոր նոր ոճի մը վրայ է, զոր հայկական ճարագործներն ստեղծած կրնան ըլլալ, առանց փոխ առնելու իրենց գաղափարն հարեան երկիրներու և նաեւ Ասորւոց զարոցէն: Պրոֆ. Սորշիկովսկու յարուցած մեծ և թանկագին հարցն է կեդրոնական գորէթաւոր եկեղեցւոյ շինուածութիւնը, ինքնուրոյնութիւնը, ուրիշ տեղ իրենք պէտք է ձեռքբերին ծաւելի և փափակաբար ըստ իրենց, կը կայանայ գորէթն պա-

ԲԱՄ. ՆՈՅՆՄԵՐ 1930

ՏՈՒՆ ԵՍԻՒ
ԵՍ. ՕԻՐ

1930



տերէն անջատուած և դրուած չորս սիւների վրայ, զոր ջրհեղեղէն ալ յառաջ Ղամիքայ որդիք գիտցած էին կանգնել կ'ընդհատ չորս քառակուսի որմերու վրայ, օրինակ վեցնեւիւղ ջրշուններու կերտած տաղաւարիկներէն, որոնք ցեցերու վրայ են շինուած, գուցէ և այլ հանճարեղ կենդանիներու որջերու և բոյներու օրինակով, որոց հետքն կորեր է մինչեւ մեր օրերը:

Հարցը ո՞ր և է զմրէթի վրայ չէ. բնագէտներ զրած են որ գետնի տակ բնակող մանր միջատներ, մրջիւններ գիտեն արուեստական բնակարաններ շինել առանձին առանձին յարկերու բաժանուած, յորս նաեւ զմրէթաւոր դահլիճներ, Սողոմոն իմաստուն, որ ոչ միայն բարոյախօս և առակախօս էր այլ նաեւ մեր ժամանակի բնագէտներու հաւասար ծանօթ բնութեան զաղտնիքներուն, ստիպուած էր երբեմն իւր խօսքը ազգու գործին համար՝ զբաւակն մարդն ճամբել առ տերտակ անասուններն, որոնք իրենց փոքրիկ մարմնոյն մէջ մեծ ճարտարապետի մը համարուողութեան (mathématique) փորձառական հաշուեկալութիւնն կը տածեն յինքեանս. «Երբ, ո՞վ մարդ առ Մըրջիւնն, առ Մեղուն և տես թէ ինչպէս իմաստութեամբ իրենց գործը կը գործեն»: Եթէ մեղուի բնագղը կը մղէ վերի յարկի բլիշներն կազմել ներքեւին պատերուն խաչաձեւած տեղւոյն վրայ, որպէս զի մեղրի ծանրութիւնն չը պատէ բարակ սորեկն (թաղանթն) և թափի մեղրն և խանգարէ աշխատութիւնն, ինչպէս հայ քարագործն բնագղամբ չկարենար յղանալ Թեւաթի (pennacchio, pendentif) և լեցնել երկու կամարներու կցման պարապն, բոլորել պսակով և դնել վրան զմրէթն. Դա արուեստ չէ, այլ դիւտ մը որ զիպուածի մը, յանկարծական մը տածութեան մը փայլն է. ինչպէս փայլակ կը փայլատակէ մթնութեան մէջ, այնպէս նաեւ յանկարծագիւտ մտածութիւնն կը լուսաւորէ մտքի մթնութիւնն, յորմէ կը ծագին գիտութիւններն, իմաստասիրութիւն, ճարտարապետութիւն. Եթէ

հայկական զմրէթն արուեստ լինէր, հայ քարագործի գիտե՞ն յառաջ, վազուց եզրպտական հանճարն, բուրգերու և սփինքսներու կառուցողներն կերտած կը լինէին իրենց աստեղաքաշխական դիտողութեանց համար: Եթէ գիտութիւն լինէր՝ յունական միտքն իւր թաղէսներու, Եւկլիդեսներու և այլ յոգնահանճար իմաստնոց հնարագիւտութեամբ պիտի կերտած լինէր Ակրոպոլի կամ կապիտոլինի վրայ, իւր աստուածոց հայր Ջեսի, Իւպիտերի կամ Արամազդայ տափակ ձեղունով տաճարի տեղ, հրաշատեխիկ և երկնահանգէտ զմրէթն, և այսօր խեղճ ու կրակ Հայաստանի քարագործներն անյիշատակ պիտի մնային երկրիս հրեւը և Հայ միտքը չպիտի լինէր զաղափարողն Ս. Սոփիայի անհասանելի զմրէթին, որ իւր անհուն գեղեցկութեամբն ղեռ պատերէն անջատուած և սիւներու վրայ կառուցուած չէ, այլ որմայեց կիսապիւններու վրայ են դրուած չորս մայր կամարներն. Եւ այս շատ մեծ նշանակութիւն ունի ճարտարապետական արուեստի մէջ, վասն զի այլ է ամրապինդ պատերու վրայ կապել կամարներն, որոնք իրենց թիկունքէն ունին խեչակներ անշաղթ պահելու ճնշող ծանրութենէն, այլ նոյն կամարներն կապել պսակով օդի մէջ և շեշտակի կայտել զմրէթն և վեղարը, նմա նապէս օդի մէջ, առանց նեցուկի. շատ մեծ յանդգնութիւն է և մեծ վարժութիւն գործնականին մէջ այն քարագործին որ առաջին քայլն առաւ ի ցոյց և ի տեսիլ դնելու նոր ոճը: Այդքան բարձրաթիւշ ճախրելու թեւեր հաւատոյ և մեծ սէր հաւասարելու երկնքին:

Աշխարհական գիտութիւնն այսպիսի հրաշալիքներն չէ տուած, և զայս կը վկայեն ամէն քննադատներն որոնք զրած են Ֆրանսայի Ժ.Գ. դարու եկեղեցիներու վրայ մինչեւ ներկայ ժամանակս, ընդ որս և այժմու Ֆրանսայի Հնարապետութեան նախագահն Դումարկը, հիւրապետելով Քէմպէ քաղաքի Եպիսկոպոսէն, հոն ժողովուրդը անդադարձեր է որ Նախագահն մասնաւոր ուշադրութիւն դարձուցեր է գե-

զեցիկ մայր եկեղեցւոյ ճարտարապետութեան վրայ, և ի պատասխանի եպիսկոպոսի ուղերձին, ըսած է. «Կըսեցն է այն միակ միջոցն որով կարելի է պահել անջակ համերաշխութիւն ժողովուրդի մէջ»։ և շարունակեք է ըսել որ հիացեր է եկեղեցւոյն բարձրաւայ գեղեցկակերտ կոներու (flèches) վրայ, որ ամօր և գործունէայ արտի արդիւնք են, Հապա Բնչ պիտի ըսէր Պր. Դուսիւրկը եթէ հազար տարի յառաջ ներկայ գտնուած ըլլար Անւոյ Մայր եկեղեցւոյ յաւակատիքին և տեսնէր Հայաստանի կապտոյ երկնքի վրայ Մարեմայ տաճարի և Բեթեւաթոի կաթողիկէին ստուերափոփն, յուզուած սրտով պիտի չբացազանչէր։

«Կաթողիկէքս երկնապար
կոթողք ու արձանք խաչակնիք,
Եւ Մարեմայս վնէ տաճար՝
Յաւեթութեան ունին նիգ։

Որովհետեւ Անւոյ ժողովուրդն թագաւորովն հանդերձ եղաւ՝ «բաջահաւատ քաջայոյս» որով «հազար տաճար և բիւր պալատ» եղան «ամուր և զործունէայ արտի արդիւնք»։

Է. Հարկ է ուրեմն քննել և տեսնել թէ Ասորիքի ժողովուրդն և իւր կոյտութեան կարգը էին ազգել այն ժողովուրդեան վրայ որ ստեղծեք է այս նոր ոճը բրիտանական ճարտարապետութեան։

Ասորիքի անդրանկածին ժողովուրդն, անհետ կորսուած ազգերու հետ և անոնց նման թողիք է հետազգայից ժառանգութիւն քարէ կամ զայլախաղէ անկատար գործիքներ, նետի զլուխներ և այլն. իսկ սկզբնական պատմութիւնն մթութեան մէջ կը կորսուի մինչեւ պատմական ժամանակներու սկիզբն, որ կապուած է երկու հզօր աշխարհալալ ազգերու հետ։ Ասորեստանացւոց և Եփրատացւոց բանականներն ընդհարուեցան Դամասկոսէն ոչ շատ հետո։ Եփրատի փակերուն վրայ կարկեմիշ քաղաքի մօտ, փարաւն Նեքաւով յազ-

թուեցաւ Նարուզդոնսոր Բարեկոնի Թագաւորէն (605 տ. Ն. Ք.) և ինկաւ Ասորա-Բաբելոնական տիրապետութեան տակ, և ապա Աքեմենեան, մինչև որ Սկիզդոնական բանակներն, Մեծն Ալեքսանդրի առաջնորդութեամբ, յաղթելով Դարեհ Պարսից Թագաւորին՝ մտան յաղթանակով և շքով Բաբելոն։

Յունաց հնագոյն պատմիչներն առնելով Ասորա-Բաղդէական մատնաններէն, ժողովրդական զրոյցներէ, որոնք աւանդաբար որդւոց որդի հասեր էին մինչև պատմագրի ժամանակներն, զանոնք զրի առին և կազմեցին Ասորիքի պատմութիւնն, զոր ունինք ձեռքերնիս։ Որով այսչափ գոնէ յայտնի է որ Ժեղար Ն. Ք. Ասորւոց երկիրն բնակուած էր զանազան ազգերէ, և ճշմարիտ է, քանզի Ասորիք և Պաղեստին ի միասին առած Ս. Գիրք կը հաշուէ անոր բնակչութիւնն աւելի քան տասնեակ ազգի կամ ցեղեր, որոնք հզօրագոյններու կրնկի տակ ճմուեցան և անհետացան։

Երկրի բնական և աշխարհագրական դիրքն ալ կը տրամադրէ միայն փոքր ազգերու բնակութիւնը շերտ մը արգասանդ հողի վրայ, որ սեղմուած է ընդ մէջ Ասորւոց անապատին և Միջերկրական ծովուն։ Անցեալ զարերու տիրապետողներուն մէջ նշանաւոր հանդիսացան Դամարացի կամ Հաթեաններն, որոնք ցոյց տուած են փոքր ի՛ շատ և նախակրթիկ կոյտութայ նաեւ Բաբելոնացւոյ վրայ, տալով արուեստաւորների քարի աշխատութեան, որոց հետքը թողած են տեղական ժողովուրդի մէջ։ Վերջին եկողն է եղած Արամական ցեղը որ սերտ կապ ունի նախնի Բիւնիկեցւոց և Փոշտացւոց հետ։ Արամական ցեղը հաստատուելով միջին Ասորիքի մէջ կեդրոնական քաղաք ունենալով Դամասկոսը, կարողացաւ բարձրանալ թագաւորութեան և ոտնձգութիւններ կատարեց Պաղեստինի վրայ, մինչև որ սապարէզ նետուող Ասորեստանցիներէն ընկճուեցաւ, ապա ենթարկուեցաւ Սիւլեւկեան Մակեդոնացիներուն, և

հուսկ Հոռոմայեցիներուն ի սպառ հպատակեցաւ, երբ մեր Տիգրան մեծն, զաշնագրով հրաժարեցաւ և Պոմպէոս զայն միացուց և ըրաւ զաւտառ հռոմէական:

Սիւրիական թագաւորութեան շնորհիւ յունական քաղաքակրթութիւն և արուեստ մտան այդ երկիրներուն մէջ և Նաբատեան ցեղն՝ որ իւր մտաւոր կարողութեամբն առանձնաշնորհեալ դիրք մը կազմեր էր Ասորեստանի և Եգիպտոսի փոխ յարարերութեանց մէջ, սորվեցաւ և իւրացուց յոյն արուեստաւորների առաջնորդութեամբ քարահատութիւնն, որ ամենամեծ դեր պիտի խաղար Ասորիքի ճարտարապետութեան մէջ:

Պատուաւոր տեղ մ'ալ պէտք է շնորհուի Նաեւ Հայոց Կոյրոտրայի ազդեցութեան Ասորիքի վրայ, մանաւանդ վերին կոչուած Ասորիքին Մեծն Տիգրանի քսան, եւհինգամայ տիրապետութեան ժամանակ, որուն ժառամբ կը վկայէ Ապպիանոս ասորի պատմիչն, որ կ'ըսէ թէ՝ Ասորիք աւելի երջանիկ ապրեցաւ Տիգրանի տիրապետութեան տակ քան Հոռոմայեցուց: Երջանիկ կառավարութիւն չեմ հասկնար սոսկ քաղաքականը, այլ և լայն մտքով զարգացմանը ճարտարարուեստից գիտութեանց և շինութեանց մէջ: Մեծն Տիգրան յոյժ զարգացած ըլլալով յունական գեղեցիկ դարութեանց մէջ ինչպէս և անոր գեղարուեստին սիրահար, նա զարդարեց իւր հիմնած Տիգրանակերտը, լեցուց յոյներով, ըստ ամենայնի բարձրացուց Հայոց Միջագետքի մտաւոր և արուեստական մակարդակն (որ պիտի վայելէր քրիստոնէական շրջանին). որով նոյն բարի նախանձով կառավարեց և զարգացուց նաեւ իրեն ժամանակից Ասորիքն, որուն համար Ապպիանոս զովեստով կը խօսի և կը դրուատէ զՏիգրան:

Տիգրանի ժամանակին տուած զարկն արուեստներու մանաւանդ քարագործութեան, լաւագոյն կերպով շարունակուեցաւ Հոռոմէական տիրապետութեան ժամանակ: Թունական հանճարն զուգադրութեամբ ասիական վառ և երեւակայոս

մտքի հետ, գեղարուեստի մէջ մտցուց այնպիսի ներութիւններ, որոնք կրնային գնահատուիլ Աթէնքի և Հոռոմի լաւագոյն շրջանին: Արեւելեան հանճարն կը զուարճանար զըրազներով և երկրաչափական քանդակներով գեղազարդել իւր շէնքերու ճակատներն, խոյակներն և կամարներն, խոյս տալով մարդակերպ արձաններէ և այլաբանական ստեղծագործութիւններէ:

Հիթանոսութեան ժամանակի ճարտարապետական արուեստի ցոյց տուած զարգացմանը թողած է աննման կոթողներ, Պալմիրա, Պետրա, Հաուրան և այլ անհամար տեղեր որոնք կը վկայեն անցեալ փառքի վայելչութիւնը այդ գեղարուեստական երկրին, որոնք հետեւելով հանդերձ յունական դպրոցի կրթութեան և ոճին, հետեւակ չեղան իրենց քարագործութեան արուեստի մէջ:

Ը. Քրիստոնէական կրօնքին վերապահուած էր Ասորւոց գրականութիւնն և ճարտարապետութիւնը հասցնել իւր գաւթաթանկէտին Հիթանոսական հաստատար տաճարական հանդէպ կանգնեցան քրիստոնէական հրաշագոյ եկեղեցիներ: Ասորիքի մէջ քրիստոնէայ ճարտարապետներ կը փորձեն «Բաղանեաց» կլորակ գմբէթներն դնել քառակուսի որմերու վրայ, քաղելով անկիւններէ և ձեւացնելով ութանկիւնի յատակ և բարձրացնել անոր վրայ կողովածեւ գմբէթն. աւելի ճարտար միջոց մը գործածած են գմբէթին կատարեալ ձեւ տալու համար, քառակուսի որմերու անկիւններու մէջ հիւսելով փոքրիկ փոսորակ կամարներ մի կամ երկու՝ վրայէ վրայ և յաջողեր են կամարապսակ մը ձեւացնել և անոր վրայ բարձրացնել զգմբէթն: Սակայն այս ձեւի գմբէթն շատ հեռու է Հայկական ոճով կերտուած զգմբէթէն, որով յիշուի Տէքսիէ և Վոհիւէ ճարտարապետներն վաղուց կնքեցին թէ

Ասորիք ոչ մէկ նորութիւն տուին Ռիւզան, դական արուեստին: Մինչդեռ ըսինք վե-
րեւ Պ. Թորամանեան նոյնպէս և Գարե-
գին Սրբազան Յովսէփեանը, հակամէտ են
կարծելու, որ եկեղեցական ճարտարապե-
տութեան արուեստն և գմբէթի գալափաբը
Հայք փոխ առած են Ասորիքէն:

Բայց մենք կը տարակուսինք որ Ասո-
րիք ազդեցութիւն գործած ըլլան Հայոց
գեղարուեստի վրայ: Տեսանք հեթանոսու-
թեան շրջանին Տիգրանի քսանեւհինգ-
ամեայ տիրապետութիւնն այնքան լաւ
ազդեր էր Ասորոց վրայ, մինչև Ապ-
պրանոսի այս մասին շեղակալութիւն կը
յայտնէ: Իսկ ըրիտառնէական Սյուրյանաց
կամ Խոսրովեանց Թագաւորութիւնն Հայ
Թագաւորներու կողմէն հաստատութիւն
մ'է, այնչափ որ Ալշակունեաց հետ ազ-
գակցական կապերով միացած էին, և Ար-
շամ կ'անցնի իբրեւ Տիգրանի եղբորոր-
դին: Ուստի տիրապետող ոյժն ներգոր-
ծական ազդեցութիւն կը բանեցնէ հպա-
տակողի վրայ, պայմանով որ նուաճուած
կամ հպատակուած ժողովուրդն զարգա-
ցումով աւելի բարձր չըլլայ քան զտի-
րապետողն: Վերին Ասորիքի ցուցած զը-
րական շարժումն, իբր կեդրոն ունէր Եդե-
սիս, որ աւելի Հայոց Միջագետքի կը
պատկանէր քան միջին և Ասորոց, որոյ
վրայ Ռընան սքանչացումով կը խօսի և
կը համեմատէ մեր Ե դարու յանկարծա-
ծագումն գրականութեան. բայց և թէ հիմ-
նովին տեղեկակ լինէր Ռընան, առաւելա-
զոյն զարմանքով պիտի գրէր թէ ինչպէս
յանկարծ երեւան ելաւ այնպիսի վսեմ
լեզու և ճոխ գրականութիւն: Եւ կը խոս-
տովանի որ այս իւր զարմացման պատ-
ճառն Քաղզէ — Ասորական դպրոցին ճո-
խութեան վրայ միայն իրենց տգիտութիւնն
է հին արամէական գրականութեան, որ
անթեղեալ կրակի պէս էր, ըրիտառնէական
կրօնքի շունչն եկաւ փութով արծարծեց
և վառեց թմբաւ մոքերն: Գնոստիկեան
դպրոցն մեծ ծառայութիւն մատուց Պա-
ղեստինու Ասորոց և Հայոց Միջագետքի
փոքր ազգութիւններուն: Եդեսիայի մէջ

Հայ Թագաւորներու հովանաւորութեամբ
հայերը լեցուեցան, և կորսնցնելով մայրա-
կան լեզուն, իւրացուցին ասորերէնը, մա-
նաւանդ եկեղեցական լեզուն և տարածե-
ցին մինչև Հայաստանի խորը, Տարօնոյ
զաւառն: Աշտիշատու վանքն Ոսկեդարուն
իսկ բնակուած էր ասորախօս հայերէ:
Հայ ասորիք կը նախընտրէին յունարէն
մատենագրել ինչպէս Բարդաճան, որու
ազգութեան յայտնապէս կը վկայէ Ս.
Խպպովիտոս, ֆիլոզոֆոսմենա կամ հեր-
ժուածողաց ղէմ շարադրած գրքին մէջ՝
թէ Հայ էր. նոյնպէս և Յակոբ Մծբնայ
Հայրապետն որ Գրիգոր Լուսաւորչի ցուեր-
որդին էր: Եդեսիոյ դպրոցին կը պատկա-
նէր նաեւ Պրոյերեսիոս Հայկազն, որ
իւր դարուն ամենահռչակաւոր հոգետորը
համարուած էր Աթէնքի և Հռոմի մէջ:

Եթէ գրոց գիւտէն յառաջ Հայաստան
կապ մը պահած էր Միջագետքի և Ասո-
րիքի հետ, յետ ստեղծելու գիր և գրա-
կանութիւն, որ իւր ճոխութեամբ և զա-
նազանութեամբ կը մրցէ յունական լա-
ւագոյն արտագրութեանց հետ, այնուհե-
տեւ բնաւ պէտք չունէր Ասորոց դպրո-
ցին և անոր ազդեցութեան: Նոս մանա-
ւանդ ղեւ Ե դարէն սկսաւ հալածանք և
կրօնական տաեւրութիւն ընդ մէջ Հայոց
և Ասորոց, և այն Մեսրոբն որ Եդեսիոյ,
Ասորիքի մէջ ստեղծեց էր իւր աստուա-
ծատուր գիրը, նոյն ինքն Ասորի հերե-
տիկոսներուն ոսկորներն ջարդելով և խա-
րելով հալածեց, Հայաստանի սահմաննե-
րէն գտելու վտարեց: Իսկ նոյն Ե դարու
վերջերուն կամ վեցերորդին սկիզբները ինչ
համարումն ունէին Հայերն Ասորոց մա-
սին՝ յայտնի է Ղազար Փարպեցոյ պատ-
մութենէն: Ինչպիսի գալոյթով կը խօսի
Վահան Մամիկոնեան Պերոգի այն խօս-
քին ղէմ, որ ասեանի մէջ ըսեց էր Հայոց
հասցէին թէ՛ «Այլ անպիտան և զունդ
յետին, որ զամ մի յիմ իշխանութիւնն
(թեան) է՝ Ասորոց է. բայց քան զԱսորի՝
Հայն է այլ յետին և անպիտան»:

Վահան վառած սրտով կը խօսի Նի-
խորոյ հետ ունեցած բանազնացութեան
միջոցին և կը պոռթկայ. «Այլ որ մարդ էր
և ամօթ կայր ի սրտի, և զայսպիսի բանս
յԱրեաց տեսնէն լսէր, ոչ միանգամայն
և երկիցս եւեթ ի դէպ էր մեռանել, այլ
թէ և տանն անգամ կեայր և հանապազ
զնոյն լսէր, տասն անգամ արժանի էր
մեռանել»։

Կրօնապէս և քաղաքականապէս միմեանց
դէմ այնչափ լարուած տրամադրութեամբ
էր դարու կէսէն մինչեւ Զ.ինը երբ Հայոց
մէջ կը զարթնու իրենց Եկեղեցւոյ ան-
կախ գաղափարն, անհաւատալի կը թուի,
որ նոքա ազգուած լինին Ասորիքէն՝ իրենց
նոր ոճով ըմբռնումին՝ զմբէթաւոր եկեղե-
ցիներ կերտելու կերպին մէջ։

Ասորիքի մէջ միակ զմբէթաւոր եկեղեցի
որ թէ կարելի է ըսել կազմ-էլ-վարդան
եկեղեցին է, Զ-է դարու կերտուած։ Սա-
կայն պէտք չէ մոռնալ որ Ե դարուն յոյ-
ներն Հայ մարզպաններ կը կարգէին Մի-
ջագետքի և Ասորւոց վրայ, և դժբախտա-
բար 450 թուականներուն, Հայոց բախա-
որոշ կռիւներուն ժամանակ, Կրօնական
շարժման Պարագլուխ Աւարայրեան դաշտի
դիւցազն Վարդան Մամիկոնեանի հակա-

ռակորդ կը հանդիսանայ միւս ոմն Մա-
միկոնեան ի նոյն տանէ՝ Վասակ անուն,
որ ձեռն կը կարկառէ համանուն Վասակ
Միւնիին՝ պարտելու զՎարդան և Հայոց
Եկեղեցին։ Եղիշէն կը գրէ. «Յայնց Մա-
միկոնեանից՝ որ կան ի ծառայութեան Յու-
նաց։ Եւ ի թշուառութեան ժամանակին
այն սպարապետ էր ասորին Հայոց, և
հաւատարիմ զօրացն Հոռովոց ի սահ-
մանին Պարսից»։

Այս Վասակի ընտանիքն երբեք չվե-
րագարծաւ Հայաստան Տարօնոյ երկիրն,
այլ հաստատ բնակութիւն հաստատեց
վերին Ասորիքի մէջ և բարեպաշտ ոմն,
Վասակի մեղքերն ցաւելու համար Սուրբ
Վարդանի յիշատակին կանգնած է հաս-
տաքստ եկեղեցին, որ շարուած քով իսկ
կը տարբերի Ասորիքի եկեղեցիներէն և
հաւանօրէն հայ քարագործի մը աշխատու-
թիւնն է։ Ամրութեանը համար կոչուած
է տեղացիներէն Դոնակ Վարդանայ։ Ահա
թէ ինչու կը հեռանանք մեր յարգելի բա-
րեկամներու կարծիքէն։

(Շարունակելի)

Հ. Գ. ՆԱԼԱԳԵՏԵԱՆ

1. Փարզ. էջ 518 տող 15.

2. Եղիշէ ազ. 1899, էջ 174-5.